

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 31/3

ք.Երևան

6 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 21.12.2017թ. N1011806/1 ակտի դեմ «ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 21.12.2017թ. N1011806/1 ակտի դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում «ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 21.12.2017թ. N1011806/1 ակտի դեմ դիմում-բողոքը բերվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված բողոքարկման ժամկետի խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:
Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ